

կարծենք թէ պէտք է նախ դնել իրը
հոլովման երկու ձևեր, 1) ջիտան-այ, 2)

իրաղկ-ան: — (Այս վերջինին տեղ
լիրում բառն ընտրելը մեզ անյաջող կը
թուի, որովհետև հարկ պիտի ըլլայ զա-
նագանել բառին վերչ աւելցուած հորդվա-
նիչը՝ բառի վերջին գրէն առաջ դրուած
ուրդվանիչն, մինչդեռ Խաղիկ-ը կամ Մա-
նուկ-ը ընտրելով՝ այդ դժուարութենէն ա-
զատ կ'ըլլանք):
Եթոյ պէտք է աւելցնել.

«Դիտողարքին Ա. — Բառերէն շատե-
րը՝ հոլովմանիշն առաջ՝ քաղցրացուցիչ
ձայնաւոր մը ես կ'ունենան, և կամ ու.
օրինակ՝ Ներ-ե-այ. Տեսլ-ե-ան, Մահ-
պան: (Դնել հու՝ այդ բառերու ցանկը):

Դիտող Բ. — Ում, իւն, թն, ին վեր-
ջացող բառերը այս հոլովման երկրորդ
ձևին վրայ կ'երթան. բայց ասոնք, (ի
բացառեալ գարուն և այնու որ կանոնաւոր
էն) տե յաւելուածը ստացած ժամանակ՝
կրկնութենէն խոսափելու և ներդաշնակու-
թեան համար՝ բառին վերջը գտնուող և
կը կորսնցնեն և իւ կը փոխուի եի. այս-
պէս կ'ըսուի Աերման փոխանակ Աերմ-
տեր որ տգեզ պիտի ըլլար, Աւալ-ան փո-
խանակ Աւանն-ամի, Անու-ան փոխանակ
Անուն-ամի, Ստ-ան փոխանակ Ստիւ-ամի
Չե-ան-փոխանակ Չիւն-ամի: Շուն և Ցուն
եէ զատ՝ ու ձայնն ալ կը կորսնցնեն ու
կ'ըլլան հան, տան փոխանակ Շու-ան,
տա – ան դժուարաբանչին ձևերն առնե-
լու:

Դնելով հոլովման երկու ձև միայն և
երկու զիտողութիւն՝ կարելի է թէ՝
երեսյներու ամբողջութիւնը յատակ պատ-
կերել՝ և թէ՝ անոնց գոյութեան պատճա-
ռը տալ:

Ա. 8.

— 1897ին մինչև 1908 Եզրակաց ընակիներուն
թիւր 10 միլիոնն քարտացած է 12 միլիոն Պահպէտ
որ 565,000 բնակիչ ուներ՝ այժմ 640,000 հոդի կը փո-
խարիք, իսկ Ազգայանցիք՝ 20 առ 100 համեմատու-
թեամբ աճած է, որովհետ այժմ 377,000 բնակիչ ունի:
— Եւէտի՞ մէջ իւն ժամանակ կանայք մարդկաց
վճարածին կը ըս կը Համայնքն պանդկապեճն պատ-
ճառար, — մարդիկ աւելի շատակեր ներդնուած էն՝
պաշտօնակաւ:

ԴՊՐՈՑԱԿԱՆ Հ Հ Հ Հ

Հ Հ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

(Տե՛ս Շար. էջ. 367.)

Թիրա 11 Մարտ 27 Փետր. 1897

Պեծապատի Տօքթօր Թորգոննան էֆենտի
Ալոենապետ Պատ. Աւումական Խորհրդոյ

Այն հրաւելը զոր ի զիմաց Պատ. Աւ-
ստամական խորհրդոյ առ մեզ ուղղելու
պատի ըրած էր, պարզապէս կը ցուցու-
նէ թէ նա մեծ կարեռութիւն կ'ընծառէ
վարժարանի աշակերտաց առողջութեան:

Եթ չնորհաւորեմ նորա եռանդը այդ
մասին, քանզի առողջութիւնը առաջին
բարիքն է ամէնուն և ի մասնաւորի ուսա-
նողաց համար Վարժարաններն առողջա-
պահէկ վիճակի մէջ պահելը՝ ոչ միայն
աշակերտները մասնակից կընէ առողջու-
թեան բարձրաստիճան օրհնութեանց՝ ի-
րենց աշակերտութեան օրերուն մէջ, այլ
և առողջապահէկ կանոնաց հետեւլը սո-
վորութիւն ընել տալով, բարւոց դաս-
արարակաւթիւն մը տուած կ'ըլլայ կենսա-
պահութեան նկատմամբ, որ օպատակար
կ'ըլլայ անոնց ամբողջ կենացը մէջ:

Ձեր տուած բացատրութենէն այնպէս
կը հասկնամ, որ Աւումն. Խորհրդութեան իր
գովելի նպատակին հասնելու համար վար-
ժարանաց միօրինակ և գործադրելի հրա-
հանգ տալ կը փափաքի: Մատգիր է վար-
ժարանաց այնպիսի ուղղութիւն տալ որ
լաւագոյնը ըլլայ զանոնց առողջապահիկ
վիճակի մէջ պահելու համար:

Բայս իս առ այժմ հետեւեալ երեք հրա-
հանգները իրենց նպատակին կը պատաս-
խանեն:

Ա. Միայն անոնք աշակերտ ընդու-
նուելու են վարժարանաց մէջ, որոնց տան
մէջ տարափոխիկ հիւանդութիւն չկայ, և
ամէն աշակերտ դադարելու է պարոց զա-
լէն երբ այսպիսի հիւանդութիւն պատահի
իրեն բնակած տան մէջ, և այն տան

միայն սկսելու է վարժարան զալը շարունակել, երբ թժշկական քննութեամբ կը ստուգուի թէ իր զալը վտանգ մը չէ դպրոցին:

Բ. Պէտք է որ ամէն աշակերտ պատուաստուած ըլլայ՝ անցեալ հինգ տարուան մէջ:

Գ. Մէն մի վարժարան առողջապահէկ վիճակի մէջ դրուելու և պահուելու համար, պէտք է որ թժշկի մը հսկողութեան և ուղղութեան տակ ըլլայ:

Այս առօջարկութեանց նպատակը պարզ է: Հանրածանօթի իրողութիւն մըն է, որ շատ անգամ համաճարակ հիւանդութիւններ վարժարանաց միջոցով կը տարածուին, ուստի թէ վարժարանները առողջութեան տեսակէտէ պաշտպանելու, և թէ հանրութեան վեսա չհասցնելու համար, վարժարանաց պաշտօնէից կողմանէ մեծ աշաւութեան պէտք կայ՝ որ տարափորիկ հիւանդութիւն գտնուած տուներու հետ հազորդակցութիւնը կը տրուի:

Պատուաստի մասին գալով, այդ աստուածապարգն զիւտին արժէցը ճանչնալու է: Յայտնի է որ ծաղկախտի զրհերը չպատուաստուզները և պատուաստնին հինցածներն են: Իցիւ թէ կարելի ըլլար ամէն հիւանդութիւն արգիլել, ինչպէս որ կարելի է ծաղկախտը արզիլել պատուաստի միջոցով: Ուստի վարժարանը հոգ տանելով որ իրենց աշակերտները պատուաստուած ըլլան, իսպառ կազատեն զանոնը այդ կործանիչ հիւանդութեան զոհ երթալէն:

Երրորդ հրահանգի մասին Պատ. Խորհրդոյ մտադրութիւնը կը փափաքիմ հրափրել սա քանի մը կէտերուն:

1. Մէն մի վարժարանի զիրըն ու վիճակը նոյնը չէ, հսկուարար ամէն մէկը առողջապահէկ վիճակի մէջ պահելու համար մասնաւոր պէտքեր կրնայ ունենալ և յատուկ կիրառութեանց հարկին տակ կրնայ գտնուիլ: Զատ զատ կերպեր իւրաքանչիւրին համար, ամէնըն ալ յարամարցուներու ուսման և գիտութեան ցուցուցած ընդհանուր սկզբունքներուն և կա-

նոններուն: Յայտնի է թէ այս պէտքերուն և կիրառութեանց բնական առաջնորդը և ուղեցոյցը թժշկ մը կրնայ ըլւլւլ:

2. Թժշկական հսկողութիւնը և առաջնորդութիւնը իրը առվորութիւն կը հաստատէ առողջապահէկ կանոնաց կիրառութիւնը վարժարանաց մէջ, որ ամենալաւ կերպն է զանոնց առողջապահէկ վիճակի մէջ պահելու համար:

3. Առողջապահութեան կանոններու մասին կրնան լրազբաց միջոցով գաղափարի փոխանակութիւններ ըլլալ, և ժամանակն ու փորձառութիւնը պիտի ցուցունէ, թէ ո՞ր աստիճան միօրինակութիւն կրնայ պահուիլ վարժարանաց մէջ առողջապահութեան կանոնաց կիրառութեան մասին:

Ահա, Տոքթոր էֆէնտի, իմ տեսութիւնս տալով համառօտիւ, գրութեամբ՝ բատխնդանաց ձերոց և ի գիտութիւն Մեծ. Անդամոց Ռւսումնական Խորհրդոյ:

Մմամ Ձերդ Յարգամօք
Տօքթ. Գ. Մատթէոսեան

Բեր 28 դեկտ. 12 Մարտ 1897

Մեծ. Տօքթ. Խորգումնան

Ասենապետ Ռւսումնական Խորհրդոյ

Պատուարժան Ռւսումնական Խորհրդորդն Ազգ. Վարժարանաց համար առողջապահութեան կանոնագիր մը յօրինելու պատօնով կարգած Յանձնաժողովին զիս ալ անգամ ընտրելու մեծ պատիւն ինձ ըրած ըլլալով, կը փութամ իւր զնահատման ենթարկել հետևեալ առաջարկութիւնները.

1. Կրաքանչիւր վարժարանի յատկանել մէկ թժշկ, որ կարելի եղածին չափ մտարնակ ըլլայ, և որ պաշտօն ունենայ արդի առողջարանական կանոնաց համաձայն վարժարանի տեղական ընդհանուր կարգադրութիւններն ընել և յարատն հակողութիւն մը ի գործ զնել անդ իւր այցելութիւններով:

2. Վարժարանին նիւթական կարողութ. A.R.A.R. @

թեանը չափով պաշտօնաւոր թժիշկին ամսական մը յատկացունել:

3.ի հարկին վարժարանի մէջ սահմանել առողջապահութեան տարրական դասնթացք մը ի ձեռն թժիշկին, որ ժողովրդական պարզ լեզուով պիտի աւանդէ առողջապահիկ կանոնաց մասին ծանօթութիւններ, և այսու կարելի է լրացնել վարժարանաց մէջ տիրող զգալի մեծ պահանձնական մը:

Ահաւասիկ այս երեք գլխաւոր կէտերը՝ որք առողջապահութեան ամէն պահանջները գոհացնելու բնութիւնն ունին, և որք յուսամ թէ անընդունելի չեն ըլւլար Պատ. Աւատմական խորհուրդէն,

Մասմաս օօքթ. Սիմոնօք

Այս չորս նամակներէն դիւրին է հետեւ տեղունել, որ մեր վարժարանաց առողջապահութիւնը կանոնաւոր ընթացքի մէջ գնելու համար, իմ արուեստակիցներս բնաւ չեն համարձակիր միօրինակ հրահանգներ խմբագրելու խորհուրդն ինձ տալ, այլ միահամուռ կըյայտնեն թժկական հսկողութեան անհրաժեշտ պէտք:

Վարժարանի մը համար թժիշկ մը անպատճառ պէտք է, մարդ կարող չէ զայս ուրանաւ: Թժիշկ պէտք է, որպէս զի կատարուին աշակերտներուն պատուաստները բժիշկ պէտք է, որպէս զի կարելի ըլլայ մաքառիլ տարափոխիկ հիւանդութիւններու աղիտարել հետևանցներուն դէմ. բժիշկ պէտք է վերջապէս, որպէս զի կարելի ըլլայ զիսնալ վարժարանի մը առողջապահական բոլոր թերութիւնները, որ անհամար են, խիստ բազմազան և գրեթէ միշտ ծածուկ, ինչպէս իմ առաջին գրութեամբս բացատրել ջանացի:

Թժկական Յանձնախումըին նամակներուն այս կարևոր կէտան յանձնելով Զերուշաղրութեան, կարծեմ թէ Աւատմական խորհուրդս Ազգ. վարժարաններու առողջապահութեան մասին ամենալաւ տնօրինութիւն մը ըրած կ'ըլլայ, եթէ փոխանակ հրահանգներ պատրաստելու, Երջարերական մը միայն հրատարակէ պահանջելով՝

որ ամէն թաղական խորհուրդ բարեկան նի,

1. Յանձնել իւր վարժարանն Ազգ. Աւատմական խորհուրդին կողմանէ որոշուած թժիշկին, որուն պաշտօնը պիտի ըլլայ, շարթական այցելութիւններով ջանալ, գիտական պահանջներու համաձայն, վարել վարժարանին ընդհանուր առողջապահութիւնը, առանց սակայն մեծ ծախսի դուռներ բանալու:

2. Կատարել անյապաղ ինչ որ թժշկը կը պատուիրէ և վարժարանին առողջապահական վիճակին կանոնաւորութիւնը կը պահանջէ:

3. Ունենալ յատուկ տումար մը, և անդ մի առ մի արձանագրել, եղած և կատարուած թժկական յանձնարարութիւնները, զորս Աւատմական խորհուրդն համարելով կը ծանօթացնէ հասարակութեան:

4. Հոգ տանիլ որ վարժարանին ներցին ընդհանուր մաքրութիւնը, ինչպէս նաև ամեն զասաւանդութիւնները, ուսանողներու մտային զբաղութեարը, զրումները, բարոյական վիճակը, մաքմամարգական կրթութիւնները և այլն, ըլլան միշտ թժիշկին առողջապահական հրահանգներուն համաձայն:

5. Զանց ընել, որ վարժարանին աշակերտներն ու աշակերտուհիներն առանց պատուաստի, և հինգած պատուաստով շնան, և առ այս թժիշկին գործը զիւրացնելու համար, պատրաստ միշտ ունենալ պատուաստի թարմ հեղուկը, որ սուղբան մը չէ:

6. Օրէնց ընել, որ տարափոխիկ հիւանդութեամբ վարակեալ տոսներէ եկող, ինչպէս նաև նորեկ աշակերտներն և աշակերտուհիները վարժարան ընդունուին առանց թժկական արտօնագրի:

7. Ուշազիր ըլլալ, որ թեթևուլիկ, մոլի, հիւանդուտ, անտարբեր, անկարող, աշակերտները ծեծող ու չարաչար պատժող զասաւուները, վարժուհիներն և արնտեաները, իբրև խանգարիչ առողջապահական կանոններու ներդաշնակութեան,

չպաշտօնավարեն՝ առանց բժշկական ըլն-նութեան և հրամանի:

8. Մասնաւոր խնամք և հոգածութիւն ունենալ աղքատ ուսանողին, և անոր առողջական վիճակին բարելաւութեանն հաւմար որոշուած բժշկական ո՞ր և է յանձնարարութիւն կատարել անթերի:

9. Նկասել առողջապահութիւնը մանկավարժութեան ընդակից մէկ մասը, և այս սկզբամբ յանձնել վարժարանը կարող և հմտու տեսուչի մը, որով թէ թաղ. խորհուրդին պարտաւորութիւնները կը դիւրանան, և թէ բժշկական հրահանգ կամ յանձնարարութիւն կ'ունենան յաջող արդինք:

Այս շրջաբերականով, որ անհամաձայն չթուիր ինձ բնաւ, նաև բժշկական Յանձնախումբին յայտնած այլ և այլ գաղափարներուն, Ուսումնական Խորհուրդս արդէն իսկ բաւական բան յանձնարարած կ'ըլլայ, թողով մնացեալը բժիշկներուն, որը պարագային համեմատ կրնան դեռ շատ բաներ որոշել:

Եթ մնայ մեզ այժմ փութացնել վարժարաններու բժշկական հսկողութիւնը, հրաւէր կարդալով կարգ մը բժիշկներու, որոնք իրենց բնակութեամբ կամ գործերով շատ յարմարութիւն և դիւրութիւն կրնան ունենալ յանձն առնելու մէկմէկ թաղային վարժարան, և որոնց անունները կրնամ բերել Զեզ եթէ կամից:

Գ.

ՍԻՐԵԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԻԹԱՆԵՐՍ

Բժշկական Յանձնախումբին հետ ունեցած խորհրդակցութեանս արդիւնքը մեր անցեալ նիստին մէջ Զեզ հաղորդելէս յետոյ, ներկայացունելով նաև պատրաստած մէկ Երջաբերականս, զոր թաղ. Խորհուրդներուն ուղղել կառաջարկից, և Գուք հաճութեամբ կընդունէից, հարգ էր որ պատրաստէի միանգամայն բժշկական մարմին մը, որպէս զի կարելի ըլլար գործազրել, ինչ որ կըպահանջուէր Ազգ. վարժարան-

ներու առողջապահութիւնը կանոնաւոր ընթացքի մը մէջ զնելու համար:

Այդ բժշկական մարմինը ծանօթացու նել կուզեմ Զեզ այսօր, բերելով ցանկն այն բժիշկներու, զորս նշանակած եմ, ու բոշելով իրենց Խորհուրդիս յանձնարարութեան համեմատ, մէկ մէկ յարմար թաղյին վարժարան, ահաւասիկ.

Գումզարուի Ոկանեան — Լուսաւորչեան վարժարանին համար, Տօրթ. Երիխնեան, որ մատը կը բնակի:

Կէտիկ բաշայի Սարր - Մեսրոպեան վարժարանին համար, Տօրթ. Աղէքսանդր պէտ Արապեան, արդէն կէտից Բաշա Կընակի:

Գումզարուի Գուրսի Պողոսիս - Վասկառեան վարժարանին համար՝ Տօրթ. Աւտիկեան, որ շատ հեռու չիբնակիր:

Ենիկերպուի Աստրերոց - Հայկանյշեան վարժարանին համար՝ Տօրթ. Ալլահէքրտեան, որ թաղին մէջ կըբնակի, և ըլլալով անդամ թաղական խորհուրդին, աւելի արդինաւոր կերպով պիտի հսկէ վարժարանին առողջապահութեան:

Սամաթիի Սահնկեան - Նուևեան վարժարանին համար՝ Տօրթ. Արզումաննեան, որ թէս թերա կըբնակի, բայց շատ անգամ բժշկական գործերով կըգտնուի Սամաթիա:

Նարը Գարուի Խորենեան - Վասկառեան վարժարանին համար՝ Տօրթ. Վարդաղբեան, որը թէս Սամաթիա կը բնակի, բայց կարող է ունենալ շատ առիթներ Նարը Գարու ալ երթալու:

Ենիկուլէի Ա. Փրկչեան Արբանոցին համար՝ Տօրթ. Ախմոնօֆ և Տօրթ. Պապաեան², որը արդէն անդամ ըլլալով Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան, կրնան յանձն առնել շարաթական այցելութիւն մը, ազգին խեղճ և անտերունջ որբերուն առողջական վիճակին համար:

1. Համասուտքին Առենադրութեանց («Բիզամ պիտօն» թիւ 118, «Մասիս» թիւ 98 22 և 24 մարտ 1897):

2. Ալժմ բաշ:

Մագրիզիւղի Ցատեան վարժարանին համար՝ Տօքթ. Եէրիտճեան, որ գիւղին մէջ կը բնակի:

Այս-Աթէֆանօի Գարամանեան վարժարանին համար՝ Տօքթ. Նահապէտեան, որ թէկ Մագրիզիւղ կը բնակի, բայց շատ անգամ ալ Կերթայ Այս-Աթէֆանօ:

Թօրգարուի Լևոնեան-Վարդուեան վարժարանին համար՝ Տօքթ. Տավուտեան, որ մօտը կը բնակի և է անդամ Թաղ. խորհուրդին:

Գարակէօմրիւկի Սրբոց Ռսիեանց վարժարանին՝ համար՝ Պարձեալ Տօքթ. Տափուտեան, որ կը բնակի և է անդամ Թաղ. խորհուրդին:

Խասպիւղի Ա. Ներսկեան վարժարանին համար՝ Տօքթ. Քէմճանեան, որ գիւղը կը բնակի:

Պալաթի Խորկեան և Էյուպի Ա. Եղիան վարժարանիներուն համար՝ Նոյնպէս Տօքթ. Քէմճանեան, որ սովորութիւն ունի այս գիւղերուն մէջ հիւանդի երթաւլու:

Բերափի Էսաեան վարժարանը Տօքթ. Գարագաշեան ուղած է ստանձնել:

Բերափի Նարիկեան մանկապարտէզն ուղած է ստանձնել Տօքթ. Գասպարեան:

Բերափի Արտենուանցին համար՝ Տօքթ. Դաշտիթեան որ իրեւ Աւենապես Աղքատախնամ ընկերութեան շատ անգամ առիթ ունենալով գտնուիլ Ա. Երրորդութիւն եկեղեցին, հնա կը բնայ Արտենուանցի աշակերտուչիներուն առողջութեանը շատ մօտէն հսկել:

Բանկաթի Ա. Լուսաւորչեան մանկապարտէզին համար՝ Տօքթ. Զօհրապեան, որ դէմը կը բնակի:

Տօլապ Տէրէի Արշակունեաց վարժարանին համար՝ Տօքթ. Շովաննէս պէյ Գայըքնեան՝, որ Բանկալթի կը բնակի, և իր զինուրական բժիշկ ամէնէն աւելի դիւրութիւն կը բնայ ունենալ, այս խեղճ

վարժարանին առողջապահութեան հոգն ստանձնելու:

Ֆէրիքէօյի Ա. Մեսրոպեան վարժարանին ուղած է ստանձնել Տօքթ. Գավաճեան, որ շատ մօտ կը բնակի:

Գասըմ Բաշշայի Ա. Մեսրոպեան վարժարանին համար՝ Տօքթ. Նշան էֆ. Այժմագեան, որ Բերայի թաղապետութեան բժիշներէն ըլլալով, երբ իւր քննական պտոյտները կատարէ, կարող է անտես չառնել երրեմն Գասըմ Բաշշայի խեղճ վարժարանն և յանձնարարել հարկ եղած առողջապահնիկ հրահանգները:

Ղալաթիոյ Կեդրունական Նախակրթարան ուղած է ստանձնել Տօքթ. Տիրան Գափամանեան:

Գէշիթաշի Մաքրունեան վարժարանին համար Տօքթ. Քրիսեան, որ հոն կը բնակի, և է արդէն անդամ Հոգարարձութեան:

Օրթագիւղի Ա. Թարգմանչաց - Հսիփիսկեանց վարժարանին համար՝ Տօքթ. Միսքճեան, որ գիւղը կը բնակի:

Գուրուչչէմէի Սրբոց բարգմանչաց վարժարանին համար ալ Տօքթ. Միսքճեան, որ սովորութիւն ունի շատ անզամ Գուրուչչէմէ երթաւլու:

Բումէլի Հսիսարի Ա. Թայեռսկեան վարժարանն, ինչպէս նաև Պօյանը գիւղի Երից Մանկաց վարժարանը բարեհաճած է անձամբ ինպղել Տօքթ. Մանուէլ պէյ Խւթիւնեան, որ արդէն Բ. Հսիսար կը բնակի:

Եէնիգիւղի Մամիկոնեան վարժարանին համար՝ Տօքթ. Լափճինճեան, որ մօտ կը բնակի և է անդամ Թաղ. Խորհուրդին:

Պէօյիւցէրէի Ա. Հսիփիսկեանց վարժարանին համար՝ Պարձեալ Տօքթ. Լափճինճեան, որ շատ անզամ առիթ ունի Պէօյիւցէրէ գտնուելու:

Պէյօզի Ա. Նիկողայոսեան վարժարանին համար՝ Տօքթ. Գազանճեան, որ գիւղը կը բնակի:

Գանտիլլի Ա. Աստիւց վարժարանին համար՝ Տօքթ. Շահպազեան, որ թէկ Բերա կը բնակի, բայց շատ անզամ առիթ

1. Այսած է և աւերակ կը մայ գեռ:
2. Վահճանած է այժմ:
3. Վահճանեցաւ հերու:

ունի բժշկական գործերով Գանտիլի զբու-
նուելու:

Գուղկուննութիւն Ա. Խոսաւորչեան վար-
ժարանին համար՝ Տօքթ. Վահան պէյ (¹)
Մանուէլեան, որ մօտը կը բնակի:

Խաստիչէի Ներսէսեան – Երմոնեան վար-
ժարանին համար՝ Տօքթ. Մեղրոսեան, որ
մօտը կը բնակի:

Խոսկիւտար – Ալամիէ Ա. Խաչ վար-
ժարանին և Մանկապարտէզին համար, ևս
ինքս, որ թէւ մօտ չեմ, բայց որովհետեւ
այդ վարժարանն իմ կրթութեանս առաջին
օրրանն է եղած, և ես էի երրեմն անոր
բժիշկը, փափար ունեցայ որ զայն ուրիշի
չի յանձնեմ:

Խոսկիւտար – Ենիմահալէ Ճեմարտն
– Ա. Կարապետ վարժարանին համար՝
Տօքթ. Թիերգեան, որ թաղին մէջ կը բը-
նակի:

Գատըգիւղի Արամեան վարժարանին հա-
մար՝ Տօքթ. Պալեան², որ զիւղը կը բը-
նակի, և ըլլալով անդամ Հոգարարձութեան,
յայտնի է՝ որ աւելի արդիւնաւոր կերպով
կրնայ հսկել վարժարանին առողջապա-
հութեան:

Գոնալը Կղզիի Ներսէսեան վարժարանին
համար՝ Տօքթ. Տիրան պէյ, որ տարիին
մեծ մասը կղզին բնակելու սովորութիւն
ունի:

Գարթալի Պլամեան վարժարանին հա-
մար՝ դարձեալ Տօքթ. Թիերգեան, որ թէւ
Խոսկիւտար կը բնակի, բայց սովորութիւն
ունի շարաթթը քանի մը անդամ նաև Փար-
թալ երթալու:

Խակ Ա. էմտապղի Ա. Նշան ամենահեռա-
ւոր վարժարանին համար՝ այն ամէն ըը-
ժիշկները, որք կը սիրեն գարնանային
զուարթարեր օրերուն մէջ զնալ Ալէմտա-
ղի, անոր անապակ ջուրերովը պարա-
րուելու, և սաղարթագեղ անտառներուն
առողջարար սիւզը շնչելու:

Այս ցանկին մէջ ուշաղրութիւն ըրի,

1. Ցեսոյ Բաշա, բայց գախճանած այժմ:
2. Վախճանած:

որ բժիշկը վարժարանին թաղարնակ ըլ-
լայ, կամ եթէ թաղարնակ չէ, գո՞նէ յա-
ճախ թաղին մէջ զանուելու սովորութիւն
ունենայ, որով վարժարանին ալ այցե-
լութիւն ընել դժուար չըլլար իրեն:

Աւելորդ է ըսել, որ այս կարգադրու-
թիւնն ընաւ երբէք վերջնական չէ, և նոյն
իսկ բժիշկներու զիտողութեամբ, կարելի
է փոխել փոփոխել:

Փափացիլի էր անշուշտ որ բժշկական
յոգնութիւններն և ծառայութիւններն ա-
ռանց փոխարինութեան չըլլային, և Ազգ.
Խոսումնական Խորհուրդը կարող ըլլար
գէթ համեստ թոշակներով վարժարութիւն
մեծարոյ բժիշկները. դժբաղջարար տիրող
դրամական ճնշչէ տազնաապը չիներեր, որ
մենց համարձակինց նոր ծախսեր առա-
ջարկել մեր թաղերուն, որոնցմէ մեծ մասն
իրենց վարժարանները բանալու խակ կա-
րող չեն:

Առ այժմ ապագային թողլով կարգա-
դրել այս խնդիրը, ևս կը հաւատամ որ
մեր բժիշկները գո՞նէ մեծ մասամբ բնա-
պահանջող չեն ո՞ր և է վարժարութիւն,
և արդէն նիթական ո՞րպիսի վարժարու-
թիւն կրնայ հաւասարիլ բարոյական այն
մեծ վարժարութեան, զոր կունենայ թը-
ժիշկը, երբ տհմայ թէ իւր արուեստը,
զիտութիւնն և ջանքը տակաւ բեզմնաւոր
կըլլան, մարդկութեան համար պատրաս-
տելով առողջ և քաջառողջ սերունդներ:

Յոյս մեծ ունիմ, թէ ընտրուած յար-
գոյ բժիշկները չպիտի մերժեն Խոսումնա-
կան Խորհուրդի այս հրաւէրը, և սիրով ու
յօժարակամ յանձն պիտի առնեն որդե.
զրել իրենց համար նշանակուած թաղա-
յին վարժարանները, որդեզրել կըսեմ, զի
ո՞վ զիտէ, քանի քանի որքեր և քանի
քանի աղքատ ուսանողներ բժիշկի մը բա-
րինամ կարսուվը հոն կը հաշին կը մա-
շին:

Բժիշկներու այցելութիւններն Ազգային
վարժարաններու շատ մեծ օգուտներ պի-
տի ընէ. այդ այցելութիւններուն շնորհի
ո՞չ միայն մեր աշակերտներուն և աշա-
կերտուհներուն առողջութիւնը պիտի

պահպանուի, զերծ մնալով մանկական հասակի շատ մը զայր անխռնեմուրիսեներէ և սպանի ախտերէ, այլ և վարժարաններու ծրագիրը պիտի կրէ տակաւ զգալի և բարերար փոփոխութիւններ, համաձայն առողջարանական կանոններու, որոնց վրայ հիմնուած է ամրող Եւրոպայի և Ամերիկայի մանկավարժական արդի դրութիւնը:

Բժիշկներու այցելութիւններէն պիտի ծնին առողջապահական ընտիր դասեր, լաւ հրահանգներ. պիտի հրատարակուին ժողովրդական զեղեցիկ յօդուածներ, և օր մին ալ՝ պիտի ունենանք առողջապահական գերբնատիր դասագիրըն, որոնց ոչ թէ օտար հեղինակներու գործերէն թարգմանութեամբ պիտի յօրինուին, այլ հայ բժիշկներու անձնական փորձառութեան արդար վաստակը, Հայ բժիշկներու բուն իսկ իրենց մտածութեան հարազատ երկունքը պիտի ըլլան, մեր կեանքին ու մեր միջավայրին բոլորովին յարմար:

Յաջողութիւն...

Սոյն երեք գրութիւններս լսելէ յետոյ, Ազգ. Ռւսումնական խորհուրդը կը պատրաստէր շուտով առաջարկած շրջաբերական, և մանաւոր թիվթիրու վրայ զայն տապագրել տալով կուղղէր կ. Պոլսոյ թարգական խորհուրդներուն, պահանջելով անոր գործադրութիւնը, ահաւասիկ ուղղուած շրջաբերականին պատճենը.

Շ Ր Զ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

Առ Թաղական խորհուրդս Մայրաքաղաքին
Վասն Առողջապահիկ
կանոնաց կիրառման յԱզգ. Վարժարանս

Ազգային կերպուական Վարչութեան Ռւսումնական խորհուրդս իւր Մարտ 22ի նատին մէջ առուած որոշմանն համաձայն կը յանձնարարէ Պատ. Խորհրդոյդ.

1. Յանձնել ջեր վարժարանը Խորհրդոյս կողմանէ նշանակեալ թժիշկին Տօքթ., որուն պաշտօնն է՝ շարաթական այցելութիւններով, վարել վարժարանին ընդհանուր առողջապահութիւնը, առանց սակայն միծ ծախըթի դոներ բանալու:

2. Կատարել անյապագ ինչ որ թժշկը կը կը պատուիրէ և վարժարանիդ առողջապահական վիճակին կանոնաւորութիւննը կը պահանջէ:

3. Ունենալ յատուկ տումար մը, և անդ մի առ մի արձանագրել եղած և կատարուած թժշկական յանձնարարութիւնները, գորս Ռւսումնական խորհուրդն հաւաքելով կը ծանօթացնէ հասարակութեան:

4. Հոգ տանիլ որ վարժարանիդ ներքին ընդհանուր մաքրութիւնն ինչպէս նաև ամէն զասաւանգութիւնները, ուսանողաց մտային զբաղումները, զքսանցները, բարյական վիճակը, մարմանարզական կը թժութիւնները և այլն, ըլլան միշտ թժշկին առողջապահական հրահանգներուն համաձայն:

5. Ջանալ, որ վարժարանիդ աշակերտներն ու աշակերտուհիներն առանց պատուասի չմնան, և առ այս թժշկին գործը զիւրացնելու համար, պատրաստ միշտ ունենալ պատուասի թարմ հեղուկը:

6. Օրէնք ընել, որ տարափոխիկ հիւանդութեամբ վարակեալ տուներէ եկող, ինչպէս նաև նորեկ աշակերտներն և աշակերտուհիները վարժարան չընդունուին առանց թժշկական արտօնագրի:

7. Ռւշադիր ըլլալ, որ թեթևաօլիկ, մուլի, հրանգուա, անտարբեր, անկարող, և աշակերտները ծեծող ու չարաչար պատժող դասաւունները, վարժուհիներն և արնեենները, իրեկ խանգարիչ առողջապա-

հական կանոններու ներդաշնակութեան , չպաշտօնավարեն՝ առանց բժշկական քըն- նութեան և հրամանի:

8. Մասնաւոր խնամք և հոգածութիւն ունենալ աղքատ ուսանողին , և անթերի կատարել անոր առողջական վիճակին բարելաւութեանն համար որոշուած բժշկա- կան որ և է յանձնարարութիւն :

9. Նկատել առողջապահութիւնը ման- կավարժութեան ընդակից մէկ մասը , և այս սկզբամբ յանձնել վարժարանդ կա- րող և հմուտ ծեսչի մը խնամոց , որով թէ թաղ . Խորհրդոյդ պարտաւորութիւն- ները կը դիրքանան , և թէ բժշկական հր- բահանգ կամ յանձնարարութիւն կունե- նայ յաջող արդիւնք :

'ի զիմաց Աւագնական Խորհրդոյ

Աւագնադպիր

Աւագնադպիր

Պ. Գ. Քերկուտենան Տօքր. Վահրամ Յ. Թորգունեան

18 Ապրիլ 1897

Պատրիարքարան Հայոց

Կ. Պուլս

Այս շրջաբերականը թաղական Խոր- հուրդներու յղած ժամանակը , ուսումնա- կան Խորհուրդը՝ Հայ բժիշկներու ալ կուղ- դէր հետեւեալ գիրը .

Պատրիարքարան Հայոց

Լ. Պոլիս

Աւագնական Խորհուրդ

Արքային կեդր. Վարչութեան

Մեծապատիւ Տօքթէօր,

Ուսումնական Խորհուրդու նկատելով որ Մայրաքաղաքի Ազգային վարժարանաց մէջ առողջապահութիւնը , հակառակ իւր աւագ կարեւորութեան , գրեթէ զանց առ- նուած է , հարկ տեսաւ այս մասին ազ- դու անօրինութիւն մ'ընել և մի քանի Պատ . Բժշկաց հետ խորհրդակցելէ յետոյ , պատրաստել մի ամփափ Հրահնանգ , զոր

որոշեց հաղորդել թաղային վարժարանաց Խոնամակալ մարմնոց :

Այլ , ըստ որում առանց բժշկական անմիջական հսկողութեան , այդ հրահնանգն իւր բաղդացեալ արդիւնքը չի պիտի ըն- ծայէ , Խորհուրդու նաև որոշեց նշանակել իւրաքանչիւր թաղի համար մի տեղաբր- նակ Բժիշկ և հրափրել զանի որ հաճի շարաթական այցելութիւններով՝ հսկել իւր թաղի ազգային վարժարանին ուսանողաց առողջական վիճակին :

Այդ , Խորհուրդու զՁեր Ազնուութիւնն ևս պատուակալ Բժիշկ անուանած լինե- լով , ա- ներկմիտ է որ պիտի բարեհաճից անձ- նուիրաբար ստանձնել Ձեզ ընծայեալ այն բարեսիրական պաշտօնն և այսու նոր ապացոյց մը տալ առ Հայ ուսանող մանկուին Ձեր տածած համակրանաց և սիրոյն :

Լանջաւ մատուցանելով Ձեզ Խորհրդոյս շնորհակալիքը

Մնամք խորին յարգանօք

'ի Դիմաց Աւագնական Խորհրդոյս

Աւագնադպիր

Աւագնադպիր

Պ. Գ. Քերկուտենան Տօքր. Վահրամ Յ. Թորգունեան

18 Ապրիլ 1897

Կ. Պուլս

Հրափրուած Հայ բժիշկները բոլորն ալ սիրով յանձն առին իրենց առաջար- կուած պաշտօնը , և ամէն թաղային վար- ժարան ունեցաւ իւր սեպհական հսկող առողջապահ բժիշկը :

Ուսումնական Խորհուրդի այս կարգա- դութիւնը բաւական տարիներ յաջողու- թեամբ շարունակուեցաւ և տեսց այն մինչև 1904:

Այսի Ուսումնական Խորհուրդը լաւ գործի մը բարի յիշատակը անցուշտ կը թողու իւր գոյութեան պատմութեանը մէջ եթէ իւր նախորդին այս մեծ ձեռնարկի գործադրութիւնդ վերսկսի . կրթական նոր ծրագիր յօրինելէ շատ աւելի զրական գոր- ծառնութիւն մը ունեցած կը լլայ :

Վ. Թորգունեան